# 2021-2022թթ ուստարի

# Հաշվետվություն

# 2-րդ կիսամյակ

# 1-ին գ դասարան

2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակում 1-ին գ դասարանում սովորել են 24 աշակերտ՝13 տղա, 11 աղջիկ հարաբերակցությամբ, կիսամյակի վերջում թիվը պահպանվել է: Դասարանում աշակերտների առաջադիմությունը 100 տոկոս է, բոլորն էլ տառաճանաչ են,յուրացրել են ուսումնական ծրագրով նախատեսված թեմաների բովանդակությունը:Յուրաքանչյուր դասի համար գրվել է պլան – կոնսպեկտ, որը մեծ դեր է կատարել ուսումնական գործընթացը ճիշտ և առավել արդյունավետ կազմակերպելու համար:Կազմակերպվել են ծնողական ժողովներ:Յուրաքանչյուր ամսվա վերջում կազմակերպվել են ծնող-ուսուցիչ հանդիպումներ:Քննարկվել են ներքին կարգապահական, ինչպես նաև դաստիարակությանն, առաջադիմությանը և ուսումնական գործընթացին վերաբերող հարցեր, խոսվել է աշակերտների սանիտարահիգիենիկ վիճակի մասին, քննարկվել են կազմակերպչական այլ հարցեր: Մասնակցել եմ դասալսումների,մի շարք միջոցառումների, կատարել եմ նշումներ, դասերը քննարկելու ժամանակ ստացել եմ փորձառու մանկավարժներից օգտակար խորհուրդներ, մեթոդական ցուցումներ:Տեղի են ունեցել փոխադարձ դասալսումներ ուսուցիչների և փոխտնօրենների կողմից:Դասղեկի ժամերին իրականացվել են դաստիարակչական բնույթի տարբեր թեմատիկայով զրույցներ, որոնք նպաստել են աշակերտների հարաբերությունների բարելավմանը դասարանում, ընկերասիրության, հանդուրժողականության ձևավորմանը:Երկրորդ կիսամյակի ընթացքում կազմակերպվել է մաթեմատիկա առարկայից բաց դաս- միջոցառում նվիրած <<Դրամ>>թեմայի ուսուցմանը՝ֆինանսական կրթության չափորոշչային պահանջների ներառմամբ, երկրորդ կիսամյակի վերջում՝ Այբբենարանի հանդես՝աշակերտների տառաճանաչ դառնալու կապակցությամբ : Տրվել են ամառային արձակուրդների համար նախատեսված հանձնարարություններ՝անցած թեմաները ամրակայելու և չմոռանալու նպատակով:Ուսումնական տարվա ավարտին կազմակերպել է էքսկուրսիա դեպի Օշական՝Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցի և հայոց խաչքար-տառերի պուրակ՝ ելնելով ուսումնադաստիարակչական նկատառումներից :

ԴԱՍՎԱՐ՝ Մ.ԹՈՎՄԱՍՅԱՆ

# ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ

| ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ | | ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿ | |
|---|---|---|---|
| Շաբաթվա օրը | Դասաժամը | Շաբաթվա օրը | Դասաժամը |
| 1.Կարգապահություն՝ օրվա ռեժիմի մշակում | | 17. Գիրքդ բաց է | |
| 2.Ինչպիսին պետք է լինի օրինակելի աշակերտը | | 18. Ինչպես օգնել մայր կամաց | |
| 3. Եկեք միասին բացահայտենք հաջողության հասնելու գաղտնիքները | | 19. Հայոց հայր բառակ | |
| 4.Զրույց նվիրված Անկախության օրվան | | 20. Քարանձավում ապրածդ դպրոցներ | |
| 5.Իմ ընտանիքը,դպրոցը և ընկերները | | 21. Հեռաց ես գալիս գարարարի | |
| 6.Զրույց նվիրված ուսուցչի օրվան | | 22. Հանգամանքները | |
| 7.Իմ իրավունքներն ու պարտականությունները դպրոցում | | 23. Գարունաբուսիկ լաց մեղանց | |
| 8.Իմ նախասիրությունները ու նպատակները | | 24. Գրիգոր Նարեկացի մորուքը | |
| 9.Ինչպես սովորել միայն լավ գործեր կատարել | | 25. Լիանով բարեկիրթ | |
| 10.Հետաքրքրությունը լավ հատկանիշ է,թե վատ | | 26. Բարեկամությունն ուսումնասիրած է մայրիից | |
| 11. Եկեք զրուցենք՝ ազատ թեմա | | 27. Գիրքը իմ բարեկամն է | |
| 12.Հայերեն լեզվի գեղեցկությունն ու զորությունը | | 28. Լիանով հարգանքի ծիծաղ երեսուն | |
| 13.Հայաստանի զինանշանի և դրոշի պատմությունը | | 29. Օրը ակնոցով գարնանային և բարի հոգիով | |
| 14.Ինչպիսի հատկանիշներով օժտված պետք է լինի հայրենասեր մարդը | | 30. Հայոց հայր բառակ | |
| 15.Հավերժ փառք մեր հերոսներին | | 31. Պատասխանենք հարցերը | |
| 16.Սանիտարահիգիենիկ կանոնների մշակում և քննարկում | | 32. Ունենք Լիանով հանգարտ և աղբյուրներ | |